ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-20-19/3-6

ք. Երևան 15-ը մայիսի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Դ. Մարկոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Չնեղ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.12 9-րդ-ից 23-րդ չափաբաժինների համար պայմանագրի կատարման փուլում ներկայացնել ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում 3 184 080 (երեք միլիոն մեկ հարյուր ութսունչորս հազար ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմատեղագրական ծառայությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Նորմա-պլյուս» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60
աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570002079340100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00053663
ՀՀ պաշտպանության նախարարության	Տնօրեն
ՆՏԱ գլխավոր վարչության պետ	
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Դ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-19/3-6 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Գնման առարկայի				
	անվանումը	ֆիրմային անվանումը և ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
1	Քարթրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի, սև	Sakura	SACB540A	PrinterMayin Limited	HP CLJ 1515 գունավոր լազերային տպիչի քարտրիջ՝ CB540A: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
2	Քարթրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի, կապույտ	Sakura	SACB541A	PrinterMayin Limited	HP CLJ 1515 գունավոր լազերային տպիչի քարտրիջ՝ CB541A: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
3	Քարթրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի, կարմիր	Sakura	SACB543A	PrinterMayin Limited	HP CLJ 1515 գունավոր լազերային տպիչի քարտրիջ՝ CB543A: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
4	Քարթրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի, դեղին	Sakura	SACB542A	PrinterMayin Limited	HP CLJ 1515 գունավոր լազերային տպիչի քարտրիջ՝ CB542A: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
5	Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, կապույտ	Sakura	SA 106R01631	PrinterMayin Limited	Xerox Phaser 6000 գունավոր լազերային տպիչի քարտրիջ՝ 106R01631: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
6	Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, կարմիր	Sakura	SA 106R01632	PrinterMayin Limited	Xerox Phaser 6000 գունավոր լազերային տպիչի քարտրիջ՝ 106R01632: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
7	Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, դեղին	Sakura	SA 106R01633	PrinterMayin Limited	Xerox Phaser 6000 գունավոր լազերային տպիչի քարտրիջ՝ 106R01633: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
8	Տոներ-քարթրիջներ Canon LBP 6030W շարքի տպիչ սարքերի	Sakura	SACE285A /CB435A/ 436A/ 725	PrinterMayin Limited	Canon LBP 6030W շարքի տպիչ սարքի տոներ-քարտրիջ՝ Canon Cartridje 725: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփերով, նոր և չօգտագործված վիճակում: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
9	Քարթրիջներ HP DJ T520 պլոտեր սարքի, կապույտ	HP	CZ130A	HP Inc.	HP DJ T520 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ՝ CZ130A HP 711, ծավալը՝ 29մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
10	Քարթրիջներ HP DJ T520 պլոտեր սարքի, կարմիր	HP	CZ131A	HP Inc.	HP DJ T520 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ՝ CZ131A HP 711, ծավալը՝ 29մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:

11	Քարթրիջներ HP DJ T520 պլոտեր սարքի, դեղին	HP	CZ132A	HP Inc.	HP DJ T520 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ՝ CZ132A HP 711, ծավալը՝ 29մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից::
12	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, փայլուն սև	HP	C9370A	HP Inc.	HP T790 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ (փայլուն սև՝ ֆոտո)՝ HP C9370A, ծավալը՝ 130 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
13	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, անփայլ սև	HP	C9403A	HP Inc.	HP T790 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ (անփայլ սև)՝ HP C9403A, ծավալը՝ 130 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
14	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, մոխրագույն	HP	C9374A	HP Inc.	HP T790 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ՝ HP C9374A, ծավալը՝ 130 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
15	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, կապույտ	HP	C9371A	HP Inc.	HP T790 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ՝ HP C9371A, ծավալը՝ 130 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
16	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, կարմիր	HP	C9372A	HP Inc.	HP T790 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ՝ HP C9372A ծավալը՝ 130 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
17	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, դեղին	HP	C9373A	HP Inc.	HP T790 մակնիշի պլոտեր սարքի քարտրիջ՝ HP C9373A, ծավալը՝ 130 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
18	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, փայլուն սև	HP	C1Q43A	HP Inc.	HP DJ Z6600 մակնիշի բաներային պլոտեր սարքի քարտրիջ (փայլուն սև՝ ֆոտո)՝ HP 773C (C1Q43A), ծավալը՝ 775 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
19	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, անփայլ սև	HP	C1Q37A	HP Inc.	HP DJ Z6600 մակնիշի բաներային պլոտեր սարքի քարտրիջ (անփայլ սև)՝ HP 773C (C1Q37A), ծավալը՝ 775 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:

20	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, մոխրագույն	HP	C1Q44A	HP Inc.	HP DJ Z6600 մակնիշի բաներային պլոտեր սարքի քարտրիջ՝ HP 773C (C1Q44A), ծավալը՝ 775 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից:
21	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, կարմիր	HP	C1Q39A	HP Inc.	HP DJ Z6600 մակնիշի բաներային պլոտեր սարքի քարտրիջ՝ HP 773C (C1Q39A), ծավալը՝ 775 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից;
22	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, կապույտ	HP	C1Q42A	HP Inc.	HP DJ Z6600 մակնիշի բաներային պլոտեր սարքի քարտրիջ՝ HP 773C (C1Q42A), ծավալը՝ 775 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից
23	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, դեղին	HP	C1Q40A	HP Inc.	HP DJ Z6600 մակնիշի բաներային պլոտեր սարքի քարտրիջ՝ HP 773C (C1Q40A), ծավալը՝ 775 մլ: Տեղափոխվում է ստվարաթղթե տուփով, նոր և չօգտագործված վիճակում: Ներկայացվում է առաջարկվող ապրանքների արտադրողի Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) երաշխիքային նամակ: Պիտանելիության ժամկետը. 1 տարի՝ մատակարարման օրվանից

Ծանոթություն: Ապրանքները պետք է մատակարարվեն քաղաք Երևան, Բագրևանդի 5 հացեով գտնվող պահեստ:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝
						2-րդ եռամսյակ
1	Քարթրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի, սև	հատ	1	4800	4800	1
2	Քարթրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի, կապույտ	հատ	1	4800	4800	1
3	Քարթրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի, կարմիր	հատ	1	4800	4800	1
4	Քարթրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի, դեղին	հատ	1	4800	4800	1
5	Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, կապույտ	հատ	4	2640	10560	4
6	Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, կարմիր	հատ	4	2640	10560	4
7	Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, դեղին	հատ	4	2640	10560	4
8	Տոներ-քարթրիջներ Canon LBP 6030W շարքի տպիչ սարքերի	հատ	8	2400	19200	8
9	Քարթրիջներ HP DJ T520 պլոտեր սարքի, կապույտ	հատ	12	22500	270000	12
10	Քարթրիջներ HP DJ T520 պլոտեր սարքի, կարմիր	հատ	12	22500	270000	12
11	Քարթրիջներ HP DJ T520 պլոտեր սարքի, դեղին	հատ	12	22500	270000	12
12	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, փայլուն սև	հատ	2	48000	96000	2

13	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, անփայլ սև	հատ	2	48000	96000	2	
14	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, մոխրագույն	հատ	2	48000	96000	2	
15	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, կապույտ	հատ	2	48000	96000	2	
16	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, կարմիր	հատ	2	48000	96000	2	
17	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, դեղին	հատ	2	48000	96000	2	
18	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, փայլուն սև	հատ	2	144000	288000	2	
19	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, անփայլ սև	հատ	2	144000	288000	2	
20	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, մոխրագույն	հատ	2	144000	288000	2	
21	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, կարմիր	հատ	2	144000	288000	2	
22	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, կապույտ	հատ	2	144000	288000	2	
23	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, դեղին	հատ	2	144000	288000	2	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒՍԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Նորմա-պլյուս» ՍՊԸ տնօրեն

Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-19/3-6 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում							
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Քարթրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի, սև	30121500/17	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800
2	Քարթրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի, կապույտ	30121500/18	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800
3	Քարթրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի, կարմիր	30121500/19	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800
4	Քարթրիջներ գունավոր HP CLJ 1515 լազերային տպիչի, դեղին	30121500/20	4800	4800	4800	4800	4800	4800	4800	4800
5	Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, կապույտ	30121500/22	10560	10560	10560	10560	10560	10560	10560	10560
6	Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, կարմիր	30121500/23	10560	10560	10560	10560	10560	10560	10560	10560
7	Քարթրիջներ գունավոր Xerox Phaser 6000 լազերային տպիչի, դեղին	30121500/24	10560	10560	10560	10560	10560	10560	10560	10560
8	Տոներ-քարթրիջներ Canon LBP 6030W շարքի տպիչ սարքերի	30121500/25	19200	19200	19200	19200	19200	19200	19200	19200
9	Քարթրիջներ HP DJ T520 պլոտեր սարքի, կապույտ	30121500/31	270000	270000	270000	270000	270000	270000	270000	270000
10	Քարթրիջներ HP DJ T520 պլոտեր սարքի, կարմիր	30121500/32	270000	270000	270000	270000	270000	270000	270000	270000
11	Քարթրիջներ HP DJ T520 պլոտեր սարքի, դեղին	30121500/33	270000	270000	270000	270000	270000	270000	270000	270000
12	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, փայլուն սև	30121500/34	96000	96000	96000	96000	96000	96000	96000	96000
13	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, անփայլ սև	30121500/35	96000	96000	96000	96000	96000	96000	96000	96000
14	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, մոխրագույն	30121500/36	96000	96000	96000	96000	96000	96000	96000	96000
15	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, կապույտ	30121500/37	96000	96000	96000	96000	96000	96000	96000	96000

16	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, կարմիր	30121500/38	96000	96000	96000	96000	96000	96000	96000	96000
17	Քարթրիջներ HP T790 պլոտեր սարքի, դեղին	30121500/39	96000	96000	96000	96000	96000	96000	96000	96000
18	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, փայլուն սև	30121500/40	288000	288000	288000	288000	288000	288000	288000	288000
19	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, անփայլ սև	30121500/41	288000	288000	288000	288000	288000	288000	288000	288000
20	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, մոխրագույն	30121500/42	288000	288000	288000	288000	288000	288000	288000	288000
21	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, կարմիր	30121500/43	288000	288000	288000	288000	288000	288000	288000	288000
22	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, կապույտ	30121500/44	288000	288000	288000	288000	288000	288000	288000	288000
23	Քարթրիջներ HP DJ Z6600 բաներային պլոտեր սարքի, դեղին	30121500/45	288000	288000	288000	288000	288000	288000	288000	288000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՍՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Նորմա-պլյուս» ՍՊԸ տնօրեն

Դ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-19/3-6 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-19/3-6 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն